

7590



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան



« 04 » 07 2024 թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՐՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 109 - 24

Նախաձեռնող՝

«Նապայի ֆարմ» ՍՊԸ  
ք. Երևան, Արուսյան 42/2

Գործունեությունը՝

Բժշկական թափոնների այրման կայանքի վերազինում  
Արարադի մարզ, Մասիս համայնք

Առդիր՝ 6 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**  
**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ № 109 - 24  
« 04 » 07 2024թ.

**«Նատալի Ֆարմ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող բժշկական թափոնների այրման կայանքի վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

**Ներածական մաս**

Նախաձեռնող՝	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն /Ա կատեգորիա/, նախագծային փաստաթղթեր
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ, ք. Մասիս

**Ներածական մաս.** «Նատալի Ֆարմ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից շահագործվում է բժշկական թափոնների ժամանակակից այրման հանգույց: Թափոնների այրման հանգույցը թույլ է տալիս ջերմային վնասազերծման եղանակով իրականացնել բարձր արդյունավետությամբ բժշկական թափոնների ոչնչացում՝ պահպանելով բոլոր սանիտարական պահանջները:

Գործունեության իրականացման համար Ընկերությունը 2020 թ. շրջակա միջավայրի նախարարության կողմից ստացել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական /ԲՓ-000012/ եզրակացություն և NՎԹ000002 վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզիա:

Ընկերությունը նախատեսում է ընդլայնել գործունեությունը՝ գործող ИНСИ В-300 մակնիշի այրման հանգույցը փոխարինել ավելի հզոր՝ ECO-4000 այրման հանգույցով, ինչը թույլ կտա այրել ավելի մեծ ծավալի կլինիկական թափոն:

Ընկերության կողմից նախատեսվող վերազինման նպատակն է ջերմային եղանակով վնասազերծել Ընկերությանը պատկանող «Աստղիկ» ԲԿ-ի և այլ բժշկական կենտրոնների գործունեության ընթացքում առաջացող բժշկական թափոնները: Գործունեությունն իրականացվելու է Արարատի մարզի Մասիս քաղաքի արդյունաբերական հանգույց Երկաթուղայինների 4 հասցեում, ընկերության կողմից վարձակալած տարածքում՝ արտադրական նպատակային նշանակության հողատեսքում /հողամասի տրամադրման հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 18102018-03-0041 վկայական, «Էլեկտրամեքառ» ԲԲ ընկերության և Ընկերության միջև կնքված Անշարժ գույքի վարձակալության պայմանագիր/:





**Նկարագրական մաս.** Գործունեության իրականացման համար Ընկերությանը հատկացված շինությունը գտնվում է հողամասի կենտրոնական մասում, զբաղեցնում է 433 քմ մակերես: Մոտակա բնակելի տունը շինությունից գտնվում է 320 մ հեռավորության վրա:

Համաձայն հաշվետվության՝ տարածքում առկա են տարբեր շինություններ՝ գրասենյակ, սանհանգույց, ցնցուղարաններ, պահակատուն, գործիքների պահպանման սենյակ, պահեստային տարածք՝ 72 քմ մակերեսով, թափոնների անվտանգ պահումն ապահովող սառնարանային տարածք և այլն: Պահեստային տարածքի հատակը բետոնյա ծածկով է, ապահովված է ջրի ծորակներով և ջրահեռացման ցանցով:

Թափոնների այրման կայանքը շահագործվում է միայն բնական գազով, այլընտրանքային վառելիք չի նախատեսվում, գազի ժամային տարեկան առավելագույն ծախսը կազմում է 90000Նմ<sup>3</sup>: Գազամատակարարումն իրականացվում է համաձայն տրամադրված տեխնիկական պայմանի: Կայանքը սպասարկող անձնակազմի կենցաղային և խմելու կարիքների համար ջրօգտագործումն իրականացվում է պայմանագրային հիմունքներով: Արտադրական տարածքում առաջացող հոսքաջրերը, համաձայն համապատասխան թույլտվության, ներքին ցանցով ուղղվում են տարածքի հարևանությամբ անցնող կոյուղի: Արտադրական տարածքն ապահովված է օդափոխման և հակահրդեհային համակարգով:

Ընկերության կողմից ներկայումս շահագործվում է ռուսական «Ինսիպրոմ» ընկերության արտադրության, բժշկական թափոնների ջերմային վնասազերծման համար նախատեսված՝ «ИНСИ В-300» այրման կայանքը: Կայանքի ժամային արտադրողականությունը կազմում է մինչև 50 կգ/ժ (կամ 0.0138 կգ/վրկ), մեկ բեռնումը՝ մինչև 300 կգ, վնասազերծման մեկ ցիկլը՝ 6 ժամ: Լիարժեք ծանրաբեռնվածության դեպքում տարեկան առավելագույն արտադրողականությունը կազմում է 36 տ/տարի:

Վերագինման նպատակով նախատեսվում է՝ ECO - 4000 մակնիշի այրման հանգույցի միջոցով բժշկական թափոնների վնասազերծում՝ ջերմային եղանակով, որը թույլ է տալիս գործնականում ամբողջությամբ ոչնչացնել այդ կարգի թափոնները: ECO-4000 կայանքը գործում է պարզ այրման եղանակով, այն կահավորված է հիմնական այրման և լրաայրման խցերով: Այրման խցի տարողությունը 10 մ<sup>3</sup> է, բեռնվածքի ծավալը՝ մինչև 4400 կգ, այրման հզորությունը՝ 280-420 կգ/ժամ է, վառելիքի՝ գազի առավելագույն ծախսը՝ 11-14 Նմ<sup>3</sup>/ժամ, վնասազերծման մեկ ցիկլը՝ 24 ժամ, ներառյալ սարքի տաքացումը և հովացումը: Վառարանի երկարությունը 5.6 մ է, լայնությունը՝ 2.4 մ, բարձրությունը՝ 2.6 մ: Վառարանի քաշը՝ 17000 կգ է, ծխատար խողովակների բարձրությունը՝ 12 մ, տրամագիծը 0.82 մ, այրման ջերմաստիճանը՝ 760-870 C°: Լրաայրման խցում ջերմաստիճանը բարձրացվում է 1000 - 1350C°, ինչը թույլ է տալիս առավելագույն չափով այրել բժշկական թափոնները:

Լիարժեք ծանրաբեռնվածության դեպքում ընկերության տարեկան առավելագույն արտադրողականությունը կկազմի՝ 500 տ/տարի: Համալիրը կաշխատի ամբողջ տարի, շաբաթական 6 օր: Հին վառարանը նախատեսվում է ապամոնտաժել:

Հաշվետվությունում ներառված է գործունեության գրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, հիմնավորվել է վերագինման համար ընտրված տարբերակը:

Վառարանում վնասազերծման ենթակա թափոններն են՝ մարմնի և ներքին օրգանների մասեր, գործածված ներարկիչներ, օգտագործված բժշկական ասեղներ, թափոններ՝ որոնք առաջանում են առողջապահական ծառայությունների արդյունքում, կանխարգելում, բուժում, ծննդաբերություն և այլն/, սուր առարկաներ (նշված հիշումով) և այլն:

Բժշկական հաստատությունից թափոնները վնասազերծման են ներկայացվում, տեղափոխվում հատուկ կահավորված ավտոմեքենաներով և տարվում են հիմնական





փակված և պիտակավորված վիճակում: Մինչև վնասագերծումը, թափոնները 3-ից 6 ժամ պահվում են սառնարանային պահեստում: Պահեստային տարածքն ապահովված է ջրի ծորակներով և ջրահեռացման ցանցով, իսկ հատակը՝ անջրթափանց ծածկույթով:

Ընդունված թափոնները տրանսպորտային միջոցներից կամ սառնարանային հանգույցից տեղադրվում են սայլակի մեջ և տեղափոխվում վառարանի սնուցման հարթակ, միանում են հիմնական և երկրորդ աստիճանի այրիչները: Առաջին աստիճանի հնոցն ունի կոնաձև կառուցվածք և թափոնների այրումից առաջացած պինդ մասնիկները լցվում են կոնի տակ՝ ընդունիչ տարողության մեջ: Ծխագազերը տրվում են երկրորդ աստիճանի հնոց, որն ունի գլանաձև կառուցվածք:

Մինչ վառարան տեղափոխելը մագնիսների միջոցով թափոնից հանվելու են մետաղական մասերը՝ լանցետներ, ասեղներ, այլն, դրանք տեղավորվելու են ստվարաթղթե արկղերի մեջ և ժամանակավոր պահվելու են նույն սենյակի անկյունում: 1-2 արկղ հավաքվելու դեպքում թափոնները կտրամադրվեն տարածաջրանում գործող մետաղների թափոններ ընդունող կազմակերպություններին:

Ծխագազերը տրվում են արտաքին շապիկով խողովակ, որում, հովանալով ծխագազերը, ծխատարի միջոցով արտանետվում են մթնոլորտ:

Այրման վառարանի շահագործման ընթացքում վնասակար նյութերի արտանետումներ են առաջանում բնական գազի և թափոնների այրման արդյունքում: Հաշվարկային արտանետումների գումարային քանակությունները՝ 500տ/տոննա թափոնի այրման դեպքում և վառելիքի այրման արդյունքում կազմում են  $\text{NO}_x$ -1.659 տ/տարի (0.2668 գ/վրկ),  $\text{CO}$ -0.137 տ/տարի, (0.022 գ/վրկ), սահմանային ածխաջրածիններ՝ 0.05 տ/տարի (0.0812 գ/վրկ),  $\text{SO}_x$  - 0.389 տ/տարի (0.0626 գ/վրկ), ՊՄ-0.012 տ/տարի (0.002գ/վրկ): Թափոնների այրման ընթացքում աննշան քանակով արտանետվում են նաև դիօքսիներ/ֆուրաններ ( $28.86 \times 10^{-6}$  տ/տարի քանակով): Արտանետումների ազդեցությունը գնահատելու և դրանք թույլատրելի նորմերի հետ համեմատելու համար իրականացվել են մթնոլորտում վնասակար նյութերի արտանետումների կոնցենտրացիաների հաշվարկներ՝ «ԷՌԱ» համակարգչային ծրագրով: Հաշվարկների համար օգտագործվել է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված կլիմայական տվյալները: Համաձայն հաշվարկների արդյունքների՝ նույնիսկ արտանետման աղբյուրի մոտ առավելագույն գետնամերձ կոնցենտրացիաները՝ ՍԹԿ մասով, գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Թափոնների այրման արդյունքում առաջանում է չոր մնացորդ /մոխիր/, որն ըստ ոլորտում կիրառվող կայանքների տեխնիկական անձնագրերի, անվտանգ է, քանի որ ենթարկվում է բարձր ջերմային ազդեցության և կարող է տեղափոխվել աղբավայրեր:

Համաձայն տեխնոլոգիայի՝ թափոնների այրումից առաջացած մոխիրը՝ սարքի անջատումից և բնական եղանակով հովացումից հետո, դատարկվելու է սարքի ստորին մասի փականի տակ տեղադրված ստվարաթղթե պարկի մեջ: Յուրաքանչյուր պարկում կարող է լցվել մինչև 50 կգ մոխիր, սակայն, աշխատանքի անվտանգության տեսակետից ելնելով, նախատեսվում է յուրաքանչյուր պարկի մեջ լցնել մինչև 30 կգ մոխիր:

Այրման մնացորդների (մոխիր) քանակը կարող է կազմել թափոնների ընդհանուր քանակի 2 - 5 տոկոսը: Հաշվարկային առավելագույն՝ 500 տ/տարի արտադրողականության դեպքում մնացորդների առավելագույն քանակը կկազմի 25 տ/տարի: Թափոնները նախատեսված են ժամանակավոր պահեստավորել մետաղական արկղերի մեջ, որոնց պարունակությունը շաբաթական մեկ-երկու անգամ նույն արկղերով, սահմանված կարգով կտեղափոխվի աղբավայր, իսկ դատարկ արկղերը կրկին կվերադառնան ընկերության պահեստ:





Նախատեսվող գործունեության հիմնական բնապահպանական ազդեցությունը պայմանավորված է բժշկական թափոնների վնասակար հատկություններով, վերջիններիս հետ շփմամբ, ինչպես նաև՝ այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումներով: Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով կարևորվում են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- կայանքի շահագործման ընթացքում ապահովել այրման ռեժիմը և անհրաժեշտ ջերմաստիճանը, ինչպես հիմնական, այնպես էլ՝ երկրորդային խցում,
- պարբերաբար իրականացնել սարքի կանխարգելիչ ստուգում և տեստավորում,
- սարքի սպասարկումը և շահագործումն իրականացնել միայն հատուկ պատրաստված անձնակազմի կողմից,
- պարբերաբար իրականացնել մերձակա տարածքների ստուգում և օդային ավազանի մոնիթորինգ՝ ածխածնի օքսիդի, ազոտի և ծծմբի օքսիդների արտանետումների նկատմամբ՝ գերնորմատիվային արտանետումները կանխելու նպատակով,
- թափոնները պահեստավորել այնպես, որպեսզի բացառվի դրանց շփումը անձրևաջրերի հետ,
- արտադրական կեղտաջրերի առաջացումը կանխելու համար վնասազերծման կայանքի մաքրումն իրականացնել չոր եղանակով՝ առանց ջրի կամ լուծույթների օգտագործման,
- բեռնարկղերի մեջ տեղադրված թափոնների ժամանակավոր պահումն իրականացնել բետոնապատ հատակով տարածքում,
- կայանքը սպասարկող բանվորը, ինչպես նաև թափոնների հետ առնչվող անձնակազմը պարբերաբար պետք է հրահանգավորվեն և անցնեն համապատասխան դասընթաց,
- թափոնների ժամանակավոր պահման հատուկ տարածքը պետք է պաշտպանված լինի մթնոլորտային տեղումներից և այլ գործոնների ուղղակի ազդեցությունից՝ քամի, արևի ճառագայթներ և այլն:

Ընկերության կողմից բացառվելու է առողջապահական կազմակերպություններից սնդիկ պարունակող սարքավորումների, ֆորմալդեհիդի և այլ վտանգավոր բժշկական թափոնների ընդունումը և այրումը, քանի որ նշված թափոնների հեռացումը յուրաքանչյուր առողջապահական կազմակերպության կողմից իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2008թ. մարտի 4-ի թիվ 03-Ն հրամանով հաստատված հավելվածների համաձայն:

ՇՄԱԳ-ում ներկայացվել է նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունների և միջոցառումների ծրագիր՝ արտակարգ և վթարային իրավիճակների դեպքում:

Շահագործման փուլում օդում ածխածնի մոնօքսիդի, ազոտի ու ծծմբի երկօքսիդների պարունակությունները որոշելու և վերահսկելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ): Նմուշառման կետերը նախատեսված են արտանետման աղբյուրին և մոտակա զգայուն կլանիչին մոտ /կայանքի ծխատար խողովակի մերձակայքում/: Մոնիթորինգի միջոցառումների պարբերականությունը կլինի եռամսյակային, չափումների արդյունքները կգրանցվեն մոնիթորինգի մատյաններում և կտրամադրվեն վերահսկող մարմիններին: Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծախսերն ըստ նախնական գնահատման կազմում են 280.0 հազար ՀՀ դրամ:

**Պարճառարանական մաս.** Փորձաքննության ներկայացված՝ ՇՄԱԳ-ի արդյունքով վերլուծվել են հնարավոր անցանկալի ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների, մարդու առողջության ու սոցիալական միջավայրի վրա կատարվել է հնարավոր տնտեսական վնասի գնահատում, ինչպես նաև մշակվել է ազդեցության նվազեցման և կանխարգելման հիմնական ուղղությունները:





Համաձայն ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» ՀՀ շինարարական նորմերի /այսուհետ՝ Նորմ/ 128-րդ կետի սանիտարատեխնիկական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքներ, սպորտի, առևտրի և սպասարկման ծառայությունների մատուցման օբյեկտներ» կետի՝ մինչև 40 հազ.տ/տարի թափոնների օգտահանման, վնասագերծման, մշակման օբյեկտների համար «կողմնորոշիչ» ՍՊԳ-ի չափը սահմանված է 500 մ /նախկին սանիտարական (ՍՆ 245-71) նորմի համաձայն ՍՊԳ-ն սահմանված է եղել 300մ/:

Համաձայն վնասակար արտանետումների ցրման հաշվարկների արդյունքների /որոնք կատարվել են «ԷՌԱ» համակարգչային ծրագրով՝ 500տ/տարի առավելագույն արտադրողականության համար/ արտանետվող նյութերի առավելագույն գետնամերձ կոնցենտրացիաները ցածր են թույլատրելի նորմերից /տատանվում են 0.003-ից մինչև առավելագույն՝ 0.397 ՍԹԿ մաս/, իսկ մոտակա բնակելի տարածքում այն ավելի ցածր է: Համաձայն Նորմի 55-րդ կետի՝ այն է I, II, III, IV և V վտանգավորության դասերի արտադրական օբյեկտների սանիտարապաշտպանական գոտու չափը կարող է վերանայվել՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (փորձաքննական) արդյունքների և առողջապահության ոլորտի պետական լիազորված մարմնի գրավոր եզրակացության հիման վրա: Ելնելով վերոնշյալից պետք է փաստել, որ վերագինման արդյունքում ՍԹԿ-ների գերազանցում չի սպասվում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Արարատի մարզի Մասիս համայնքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ առողջապահության, ներքին գործերի նախարարությունները, Արարատի մարզպետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

Ստացված կարծիքներով և փորձաքննության արդյունքում առաջացած դիտողություններով՝ հաշվետվությունը լրամշակվել է: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են քաղաքաշինության կոմիտեն, հրավիրված փորձագետը, որոնց կողմից ստացված կարծիքները ևս հաշվի են առնվել:

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեությունը կարևոր է ինչպես բնապահպանական, այնպես էլ առողջապահական տեսանկյունից: Վերջինիս իրականացումը կարող է նպաստել վտանգավոր թափոնների հեռացման և տեղադրման հետ կապված շրջակա միջավայրի վրա ազդեցության և մարդու առողջության հետ կապված խնդիրների լուծմանը: Շնորհիվ ժամանակակից ավտոմատ սարքավորումներով կահավորված այրիչների՝ արտանետումները նվազագույն են և չեն ավելացնի բնակելի տարածքների օդային ավազանի աղտոտվածությունը:

### Փորձաքննական պահանջներ

- Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հաշվետվությամբ նախատեսված մշտադիտարկման (մոնիթորինգ) և բնապահպանական միջոցառումների կատարումը, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիրը, ինչը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական մարմիններին և հանրությանը:





- Հաշվետվությունում նախատեսված բնապահպանական միջոցառումների չբավարարման դեպքում, նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական բոլոր նորմերն ապահովելու նպատակով:
- Պահպանել ՇՄԱԳ-ում ներկայացված տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները, արտադրական ցուցանիշները:
- Պահպանել աշխատանքի անվտանգության նորմերը, ելնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով (հոդված՝ 243, 244) ամրագրված՝ մարդու առողջության և անվտանգության պահանջից:
- Անհրաժեշտ է արտադրական օբյեկտների սանիտարապաշտպանական գոտու չափը համաձայնեցնել առողջապահության ոլորտի պետական լիազոր մարմնի հետ՝ համաձայն Նորմի 55-րդ կետի:

**ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ**

«Նատալի ֆարմ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող բժշկական թափոնների այրման կայանքի վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:



«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ *[Signature]* Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝ *[Signature]* Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ *[Signature]* Արմինե Վարդանյան